



# Ազդարարութեան Trumpet's Sound Փիոդ

49-րդ ՀՄԴ, ԱՌԱՐԱՐԵԱ  
ԵՌԵՍՆԵՐ - ԳԵՂԱՇԵՐ 2018



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՄ ՓՈՂ»  
երկանուած հոգեւոր քերք

Պատասխանատու խմբագիր՝  
հովի Հրաշ Գույուճեան

ACM AUSTRALIA  
PO BOX 1593,  
CHATSWOOD NSW 2057  
EMAIL: hkiujian@acmaust.org  
URL: www.acmaust.org



## ԱՍՍ-ի աղօթքի Նիւթեր

Կը գովարանենք Յօրը ամէն ինչի համար եւ կը խնդրենք ծեր աղօթքները նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներուն համար:

- Չենոք կը մօտենայ եւ շատ երեխաներ ցուրտի պատճառով կը հիւանդանան:
- Աղօթք՝ որ Տէրը ապահովէ մեր կարիքաւոր ընտանիքներու անհրաժեշտ վառելափայտի ծախսերը:
- Աղօթք՝ որ Տէրը ապահովէ մեր հիւանդներու անհրաժեշտ դեղերու ծախսերը:
- Շնորհակալութիւն յայտնէք Ասուլածաշունչի սերտողութեան նոր խմբակի համար, որ այդքան կարծ ժամանակին կ'աճի:
- Աղօթք՝ եւ յիշէք Քրիստոսով մեր ծառայակիցներուն մինչ Սուլը Ծնունդը կը մօտենայ:
- Փառք տուեք Վանաձորի մանկական եւ պատանեկան խմբակներու համար:
- Աղօթք՝ որ ԱՍՍ 2019թ.-ի օրացոյները տպելու ծախսերը ժամանակին հոգացուին:

## Բովանդակութիւն

Սուլը Ծնունդ՝ տալու ժամանակը . . . . .	3
<i>Հովի Հրաշ Գույուճեան</i>	
Ապաշխարութիւն՝ առանց	
պայմաններու . . . . .	7
<i>Բաժքի Զարգարեան</i>	
Մելքիսեդեկ կ'օրինէ Աբրամը . . . . .	8
<i>Տռն Մրումք</i>	
Ածուխի կողովը . . . . .	11
<i>Քաղուած</i>	
Յրակիրուած եք խրախճանքի . . . . .	13
<i>Աւքս Տիրապ</i>	
Յայ քրիստոնեական	
միսիոներութիւն . . . . .	15
<i>Հովի Հրաշ Գույուճեան</i>	

Կազմի նկարը՝ Արարատ լեռ, ACM 2017թ.

## Սուրբ Ծնունդը՝ տալու ժամանակը

**Ա**յցելէք առեւտուրի կեդրոնները եւ ձեզի համար շուտով պարզ կը դառնայ, թէ եկեր է տարուայ այն ժամանակը, երբ նուէրներ կ'առնենք ու զիրար կը փոխանակենք: Մեր քնակարանները արդին լեցուն են այնպիսի բաներով, որոնց կարիքը չունինք, սակայն երեխաները նուէրներ տալով՝ կը սիրեն զարմացնել իրենց ծնողներուն: Կաղանդ պապան կ'ուզէ նուէրներ բերել, մեծ հայրիկն ու մեծ մայրիկը շփորուած են, եւ չեն զիտեր ինչ առնել եւ որու համար առնել: Երբեմն մեկու մը կը մոռնանք եւ ամօք կը զգանք, քանի որ ցանկէն դուրս մոռցած ենք: Յիսուսը բոլոր քրիստոնեաններուն կը սորվեցնէ տալու մասին՝ աղքատներուն տալու մասին: Ասիկա քրիստոնեական իհմնական վարժութիւն է:

1. «Ինք իր աչքերը դէպի իր աշակերտները վերցուց ու ըսաւ. «Երանի՝ ձեզի աղքատներուդ, վասն զի ձերն է Աստուծոյ թագաւորութիւնը: Երանի՝ ձեզի որ իհմա անօթի էք, վասն զի պիտի կըշտանաք: Երանի՝ ձեզի որ իհմա կու լաք, վասն զի պիտի խընդոք» (Ղոկ. 6:20-21):

Աղքատութիւնը համաշխարհային խնդիր է, ոչ միայն աղքատներու համար, այլև ձեզ եւ ինձ: Ե՞րբ պէտք է օգնենք: Ինչպէ՞ս պէտք է օգնենք: Որքա՞ն պէտք է օգնենք: Յիսուս ըսաւ. «Վասն զի աղքատները ամէն ատեն ձեզի հետ ունիք»: Մենք պէտք է հոգ տանինք, մեր հացը բաժնեկցենք ու հասնինք այդպիսի կարօտեալներուն: Այս Սուրբ Ծնունդին պիտի օգնէ՞ք աղքատներուն:

2. «Այն ատեն թագաւորը իր աջ կողմը եղողներուն պիտի ըսէ. «Եկէք իմ Հօրս օրինածները, աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած թագաւորութիւնը ժառանգեցէք. Վասն զի անօթեցայ եւ ինձի ուտելիք տուիք. ծարաւեցայ ու ինձի խնցուցիք. օտարական էի, զիս ներս աղիք. Սերկ էի, զիս հազուեցուցիք. իհւանդ էի, ինձի տես եկաք. բանտի մեջ էի, ինձի եկաք» (Մատթ. 25:34-36):

Տալը Երկինքէն տրուած շնորհը մըն է: Ոմանք չեն կրնար բաժնուիլ

իրենց հարստութենէն, իսկ ուրիշներ՝ երջանիկ են երբ իրենց ունեցուածքով ուրիշին կ'օգնեն: Ե՞րբ էր վերջին անգամ, երբ աղքատի մը գումար նուիրեցիք: Կը յիշեմ Սիօհին Արեւելքէն Աստրալիա հաստառուած տարեց տիկնոց մը, ով մեր եկեղեցին կանոնաւոր յաճախողներէն մէկն էր: Օր մը պաշտամունքէն եսոք մօտեցաւ ինձի՝ իր ձեռքին մէջ ունենալով խնամքով փաթրուած քաշկինակ մը, ու լսաւ. «Ես ծեր կին մըն եմ, որդիիս հետ կ'ապրիմ ու եկամուտի աղքիր չունիմ: Երբեմն բոռնիկներս մետաղադրամներով կը խաղան: Գորգին վրայ ահա այս մետաղադրամները գտայ»: Ան կ'ուզէր, որ վերցնեի այդ մանր մետաղադրամները, որոնք մեծ արժէր չունեին: Այդ այն ամէնն էր ինչ ունէր: Այս Սուրբ Ծննդին պիտի օգնէ՞ք աղքատներուն:

3. «Յիսուս անոր նայելով՝ սիրեց զանիկա ու լսաւ անոր. «Մէկ քան պակաս է քեզի. զնա՛, ունեցածդ ծախւ՛, տո՛ր աղքատներուն ու երկինքը զանձ պիտի ունենաս եւ խաչը վերցուր ու եկուր իմ ետեւէս»: Անիկա այս խօսքին համար խոժոռելով՝ տրտմած զնաց, վասն զի շատ ստացուածք ունէր» (Մարկ. 10:21-22):

Վերոյիշեալ հատուածը շատ սրտաճմիկ պատմութիւն մըն է երիտասարդի մը մասին, ով դէմ առ դէմ հանդիպեցաւ Տէր Յիսուսին եւ հեռացաւ Անիկ՝ իր դրամասիրութեանը պատճառով: Յիսուսը իրեն չըսաւ, որ մուրացկան դառնայ կամ փողոցներուն մէջ պառկի: Յիսուսը ըսաւ, որ բաւականաչափ հարստութիւն ունի ուրիշներուն հետ բաժնեկցելու համար, եւ հետեւարար՝ կրնար ունեցածը ծախւեւ եւ աղքատներուն տալ: Այսօր շատ եկեղեցիներ միեւնոյն խնդիրով կը տառապին: Անոնք իրենք զիրենք կը հարստացնեն ու կ'անտեսեն աղքատներուն: Այս Սուրբ Ծննդին պիտի օգնէ՞ք աղքատներուն:

4. «Եւ Յիսուս զանձանակին քով նատած՝ կը նայէր թէ ժողովուրդը զանձանակին մէջ ինչպէս ստակ կը ձգէ: Շատ հարուստներ շատ քան ձգեցին: Աղքատ որքեւայրի մըն ալ եկաւ ու երկու լումայ ձգեց, որ նաքարակիս մը կ'ընէ: Իր աշակերտները իրեն կանչելով՝ ըսաւ անոնց. «Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ այս աղքատ որքեւայրին զանձանակը ստակ ձգողներուն ամենէն աւելին ձգեց. Վասն զի ամէնքը իրենց աւելցածէն ձգեցին, բայց ասիկա իր չքաւրութենէն՝ ունեցածին բոլորը ձգեց՝ իր բոլոր ապրուստը» (Մարկ. 12:41-44):

Աստուած թերեւս մեր ամէն ունեցածը չպահանջէ, բայց Ան կը պահանջէ մեր լաւագոյնը լինել ուրիշներուն օգնելու համար: Մենք համապատասխան վարձք պիտի ստանանք. որքան աւելի շատ տանք, այնքան աւելի շատ պիտի ստանանք, թէ՛ Երկրի վրայ եւ թէ՛ Երկինքի մէջ: Այս Սուրբ Ծննդին պիտի օգնէ՞ք աղքատներուն:

5. «Զինք հրաւիրողին ալ ըսաւ. «Երբ ճաշ կամ ընթրիք կ'ընես, մի՛ կանչեր քու բարեկամներդ, ո՛չ ալ քու եղբայրներդ եւ ո՛չ քու ազգականներդ, ո՛չ քու հարուստ դրացիներդ, որ չըլլայ թէ անոնք ալ փոխարէնը քեզ հրաւիրեն ու քեզի հատուցում ըլլայ: Հապս երք հացկերոյթ կ'ընես՝ աղքատներ, պակասաւրներ, կաղեր ու կոյրեր հրաւիրէ ու երանելի պիտի ըլլաս, վասն զի անոնք չեն կրնար փոխարէնը քեզի հատուցանել. քանզի արդարներուն յարութիւն առած ատենը փոխարէնը քեզի պիտի հատուցուի» (Ղուկ. 14:12-14):

Աղքատներուն օգնելը տարբեր ձեւերով կրնայ ըլլալ: ԱՍՍ-ն Հայատանի մէջ իր ծառայութեան տարիներու փորձի շնորհի գտած է, որ կարիքները բազմազան են. բժշկական օգնութիւն, ձմեռուայ վառելափայտ, սննդամբերը, նոր տարուայ նույրներ կարիքաւոր երեխաներուն եւ այլն: Այս Սուրբ Ծննդին պիտի օգնէ՞ք աղքատներուն:

6. «Հարուստ մարդ մը կար, որ ծիրանի ու բենեկ կը հագնէր եւ ամէն օր փառաւորապէս ուրախութիւն կ'ընէր: Ղազարոս անունով աղքատ մըն ալ կար վերբերով լեցուն, որ անոր դրանը առջեւ դրուած էր: Ան կը փափաքէր հարուստին սեղանէն ինկած փըշ-րանքներէն իր փորը լեցնել: Շուները կու գային եւ անոր վերբերը կը լզէին: Աղքատը մեռաւ ու հրեշտակները Արքահամի գոզը տարին զանիկա: Հարուստն ալ մեռաւ ու բաղունցաւ: Երբ դժոխքը՝ տանջանքի մէջ էր հարուստը՝ իր աչքերը վերցնելով հեռուէն տեսաւ Արքահամը ու Ղազարոսը անոր գոզը հանգիստ նստած: Այն ատեն աղաղակեց ու ըսաւ. «Հա՛յր Արքահամ, ողորմէ ինձի ու դրկէ Ղազարոսը, որպէս զի իր մատին ծայրը ջուրը թաքիւ ու զովացնէ իմ լեզուս, վասն զի այս բոցին մէջ կը տանջուիմ»: Արքահամ ըսաւ. «Ո՛րդեակ, միտքդ թեր, որ դուն քու կեանքիդ մէջ քու բարիքներդ առիր, նոյնպէս Ղազարոս՝ չարիքներ. իիմա անիկա հոս կը մխիթարուի ու դուն կը տանջուիս»» (Ղուկ. 16:19-25):

Անշուշտ, կրնաք ձեր գրպանի փշրանքները տալ. շատ աղքատներ կան, որոնք կրնան օգտուիլ ասոնցմէ: Անոնք պիտի օրհնեն ձեզ ու Աստուած պիտի վարձատրէ ձեզ, եթէ այս Սուրբ Ծնունդին աղքատներուն օգնեք:

7. «Առակ մըն ալ խօսեցաւ անոնց՝ ըսելով. «Հարուստ մարդու մը արտերը առատ բերքեր տուին: Ան կը մտածէր ինքնիրեն ու կ'ըսէր. «Ի՞նչ ընեմ, վասն զի տեղ չունիմ, ուր իմ բերքերս ժողվեմ»: Եւ ըսաւ. «Իմ ամբարներս քակեն ալ աւելի մեծը շինեն եւ հոն ժողվեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս». Եւ իմ անձիս ըսեմ. «Ո՛վ անձս, շատ բարիքներ ունիս շատ տարիներու համար ժողվուած. հանգչէ՛, կե՛ր, խմէ՛ եւ ուրախ եղի՛ր»: Բայց Աստուած ըսաւ անոր. «Անմի՛տ, այս զիշեր հոգիդ քեզմէ պիտի պահանջուի. ուստի այն քու պատրաստած բաներդ որո՞ւ պիտի ըլլան»: Այսպէս է անիկա, որ իր անձին համար գանձ կը դիզէ, բայց Աստուծոյ չի հարստանար» (Ղուկ. 12:16-21):

Աստուած Իր լաւագոյնը տուաւ Իր միածին Որդին աշխարհ ուղարկելով՝ Տէր Յիսուս Քրիստոսը: Սուրբ Ծնունդի ամբողջ իմաստը կը կայնայ Աստուծոյ՝ Իր Որդին մարդկութեան փրկութեան համար աշխարհ ուղարկելու մէջ: Աստուած չերկմտեց, Ան սիրեց մեզ, երբ դեռ մեղաւոր էինք: Մարդկութեան փրկութեան համար մեր Տէրը չյապաղեց Իր կենանքը տալու, Երկինքի փառքը ձգելու: Ան ծնաւ մսուրի մէջ, քողնելով Երկինքի ողջ փառքը:

Արդեօր քու սիրտդ Յիսուսին պիտի տա՞ս այս Սուրբ Ծնունդին: Կուգե՞ս դառնալ Իր զաւակը:

ԱՍՍ-ի եւ «Ազգարարութեան փող»-ի ծառայակիցներու անունով կը մաղթենք մեր ընթերցողներուն օրհնեալ Սուրբ Ծնունդ եւ Նոր տարի: Մող Աստուած օրհնէ ձեզ:

Հ. Գ.

---

Եթէ կը փափաքիք նուիրաբերել աղքատներուն եւ Հայաստանի երեխաներուն, մեզ հետ կապ հաստատեք հետեւեալ իմէյլով՝ [info@acmaust.org](mailto:info@acmaust.org): Կրնաք նաեւ նուիրաբերել [www.acmaust.org](http://www.acmaust.org) կայքէջի միջոցով: Աստուած կը սիրէ ուրախութեամբ տուողին:

## Ապաշխարութիւն՝ առանց պայմաններու

«Ես կ'ուզեմ փրկուիլ, բայց չեմ կրնար», «Ես կ'ուզեմ Յիսուսին դառնալ, բայց այնքա՞ն դժուար է»: Երբեմ լսա՞ծ էք որիշներու այսպէս արտայայտուիլը: Հաւանաբար դուն ալ նման խօսքեր ըսած ես: Կ'ուզես փրկուիլ, բայց կը մտածես, թէ շատ դժուար է: Շատ մարդիկ իսկապէս զիտեն, թէ փրկուելու համար Քրիստոսի կարիքն ունին: Այնուամենայնիւ, կը մտածեն, թէ իրենց համար անհնար է փրկուիլը:

Պատճառն այն է, որ մարդիկ կը մտածեն, թէ փրկուելու համար պէտք է մաքրեն իրենք իրենց նախքան փրկութեան համար Քրիստոսին դիմելը: Այդպէս մտածելու յաճախ այսպիսի պատճառներ կը ներկայացնեն. վաստ սովորութիւններ, ծխախոսի, մոլախաղերի, վաստ բերանի եւ նման բաներու կախուածութիւններ, եւ ուստի կը խորհին թէ չեն կրնար փրկուիլ:

Երկու շաբաթ առաջ նման մարդու հետ կը գրուցէի. արցունքներն աչքերուն ըսաւ, թէ կ'ուզէ փրկուիլ, բայց չէր կրնար դադրեցնել ծխելու սովորութիւնը: Թոյլ տուեք ըսել ձեզի, որ փրկութիւնը միայն հաւատքի միջոցով է: Հաւատք Քրիստոս Յիսուսի հանդէա: Այն ինչ-որ բան ընելով կամ չընելով չէ: Ամէօք փրկութիւն կը ստանայ միայն Քրիստոսին հաւատալով:

Կը տեսնէ՞ք. ոչինչ չկայ, որ դուք եւ ես կրնանք ընել, որպէսզի փըրկուինք: Փրկուելու համար պէտք է միայն Յիսուս Քրիստոսին հաւատնք, խաչի վրայ Իր կատարած գործի համար: Հետեւարար այն մեր գործերէն կախեալ չէ: Այն մեր վաստ սովորութիւնները դադրեցնելու միջոցով չէ: Այն լաւ սովորութիւններ ձեռք բերելով չէ: Այն բարի մարդ ըլլալով չէ: Այն միայն Յիսուս Քրիստոսին հաւատալով է՝ այն աշխատանքի համար, որ Ան մեզ համար կատարեց Գողգոթայի խաչին վրայ:

Երբ բազմութիւնը Պետրոսին հարցուց, թէ փրկուելու համար ինչ պէտք է ընել, Պետրոսը պատասխանեց. «Հաւատացէք Յիսուս Քրիստոսին»: Եթէ թերեւս նոյն հարցը կուտաս, պատասխանը շատ պարզ է. «Հաւատա՛ Յիսուս Քրիստոսին»: Եւ դուք կը փրկուիք:

## ՄԵԼԻՍԵԴԵԿ Կ'ՕՐԻՆԵ ԱՐՐԱՄԸ

Կարդացէք Ծննդոց 14-րդ օլուխը

**Մ**բրահամի եւ Ղովտի միջեւ հակադրութիւնը կը շարունակուի: Ղովտի խնդիրները աւելի շատցան փոխանակ քիչնալու: Ան թերեւս մտածեց, որ Յորդանանի հովիտ տեղափոխութիւնը իր կեանքը պիտի հեշտացնելու, եւ այլեւս ստիպուած պիտի չ'ըլլար միջամտելու իր հովիւներու եւ իր հօրենքօր Աբրահամի հովիւներու միջեւ ծագած վէճերուն մէջ: Բայց ան սկսաւ Սոդոմին աւելի մօտ ըլլալ, մինչեւ որ վերջապէս բնակութիւն հաստատեց այնտեղ: Այդ ժամանակ էր, որ խնդիրները իսկապէս սկսեցան:

Յորդանանի հովիտի մի քանի թագաւորներ տուրք կուտային Արեւելքի թագաւորի մը: Անոնք 12 տարի շարունակ այդպէս ըրին եւ 13-րդ տարին ապստամբեցան: 14-րդ տարին Արեւելքի չորս թագաւորներ յարձակեցան մեծ տարածքի մը վրայ, որպէսզի վերականգնեն իրենց կորսնցուցած վերահսկողութիւնը եւ ամրացնեն իրենց դիրքերը իրենց հարկատու դարձնող թագաւորի նկատմամբ: Ծննդոց 14-րդ օլուխը պատերազմի մանրամասները կը ներկայացնէ: Սոդոմի եւ Գոմորի թագաւորները իրենց տարածքները պաշտպանելու ժամանակ խայտառակ պարտութիւն կրեցին: Չնայած որ անոնց զինուորները պէտք է տարածքը լաւ ճանչնային, սակայն կը տեսնենք որ անոնք ինկան նաւթով լեցուն հորերի մէջ, որը բաւական շատ էր այդտեղ: Արեւելքի թագաւորները Սոդոմի ու Գոմորի բոլոր ունեցածնին ու անոնց բոլոր պաշարները առին ու գացին, ներառեալ՝ մարդկանց:

Մարտի դաշտէն փախած փախստական մը գնաց Աբրահամին, որպէսզի հաղորդէր իր եղրօրորդի Ղովտի գերութեան լուրը: Այստեղ կը տեսնենք Աբրահամի հոգածութեան լաւագոյն դրսեւորումը: Աբրահամի փոխարէն ուրիշ մարդ եթէ ըլլար, հաւանաբար մտածէր թէ այլեւս ոչինչ չկար ընելու: Ինքը ո՞վ է, որ համարձակուի յարձակիլ յաղորդ թագաւորներու վրայ, յատկապէս Արեւելքի թագաւորներուն: Բացի այդ, չէ՞ որ Ղովտը ինքը ընտրեց այդ ճանապարհը: Ան տեսաւ Յորդանանի հովիտը եւ որոշեց այնտեղ ապրիլ: Եթէ ինչ-որ բան սխալ ընթացը ստացաւ, ապա ատոր պատճառը սխալ որոշման հետեւանքն էր: Բայց

Աքրահամը երբեք այդպէս չմտածեց:

Աքրահամը հաւաքեց աւելի քան 300 կրթուած ծառաներ: Ասիկա ցոյց կուտայ Աքրահամի կազմակերպչական բարձր հմտութիւնը, ինչպէս նաև հեռատեսութիւնը, որ նախքան որեւէ անակնկալ իրադարձութեան հանդիպելը կարգադրութիւններ տեսած էր: Աքրահամը նման զօրքի համար առնուազն երեք կամ չորս իրամանատարի կարիք կունենար: Այս տղամարդկանց կրթելու համար անիրամեշտ էր հմտութիւն ու գիտելիք: Ջենք ունենալն ու կարճ ժամանակուայ մէջ մարդկանց զինելը կը վկայեն Աքրահամի խորաքափանցութեան, կարողութեան ու նախապատրաստութեան մասին:

Աքրահամը իր ռազմավարական հմտութիւնները ցոյց տուաւ, երբ իր մարդկանց առաջնորդեց պատերազմին մէջ: Ան իր զօրքը գունդ քունդնեց եւ զիշերով յարձակեցաւ թշնամու վրայ ու զարկին զանոնք եւ քշեցին մինչեւ Քորա, որ Դամասկոսի հիւսիսային կողմն է: Աքրահամը ես բերաւ բոլոր բարիքը, եւ նաև իր ազգականին՝ Ղուստին եւ իր ունեցուածքին, նաև կանանց եւ միւս մարդկանց:

Աքրահամը յաղքանակ տարաւ իրմէ աւելի մեծ քանակի դէմ: Երբ կը մտածեմ մեր առջեւ դրուած փորձութեան մասին, երկու հնարաւոր վտանգներ հաշուի կ'առնենք: Մէկ կողմէն, Աքրահամը կրնար ֆիզիկապէս սպառուած ու խոցելի ըլլար, իսկ միւս կողմէն կրնար շատ աւելի ինքնավստահ ըլլալ իր յաջողութեան համար եւ խոցելի ըլլալ որեւէ փորձութեան ժամանակ: Բայց Աստուած նախապատրաստեց իրեն զալիք փորձութեան համար, ուղարկելով քահանա-թագաւոր Սելքիսեղեկին, նախքան Սոդոմի թագաւորին հանդիպելը:

Սելքիսեղեկը, բարձրեալ Աստուծոյ քահանան եւ Սաղէմի թագաւորը հացով ու զինիով դրւս եկաւ Աքրահամը դիմաւորելու: Նէեմ. 5:15-էն կը հասկնանք, թէ հացը եւ զինին թագաւորին վճարուած հարկի տեսակ էր: Այստեղ թագաւորը հացն ու զինին Աքրահամին տուաւ: Սիեւնոյն ժամանակ, թագաւոր-քահանան օրինեց Աքրահամին, որպէս երկինքի ու երկրի տիրոջ՝ բարձրեալ Աստուծոյ ծառայ: Աքրահամը զօրութիւն ստացաւ զալիք փորձութեան համար: Սիեւնոյն ժամանակ Սելքիսեղեկը գովարանեց Աստուծոյ՝ Աքրահամի թշնամիներուն անոր ձեռք մատնելու համար:

Երբ Սոդոմի թագաւորը Աքրահամին առաջարկեց իրեն միայն մարդ-

կանց վերադարձնել, իսկ բարիքները իրեն պահել, Աքրահամը պատրաստ էր դիմակայել այդ փորձութեանը: Աքրահամի կտրուկ ու յատակ պատասխանը կ'արտացոլէ Սելջիսեղեկի օրինութեան մեծութիւնը, երբ ան ըստ, թէ երկինքի ու երկրի տէրը եղող բարձրեալ Աստուծոյ բարձրացուց իր ձեռքերը, եւ որ Սորումի թագաւորին պատկանող դերձանէ մինչեւ կօշիկի կապ պիտի չ'առնէ, որպէսզի ան չ'ըսէ թէ Աքրահամին ինքը հարստացուց:

Բոլորիս կեանքին մէջ փորձութեան ժամանակներ կուգան: Եթէ կուզնը հաստատուն կենալ, ապա կարիք ունինք մեր մեծ Քահանայապետի ծառայութեանը: Սենք քահանայապետ մը ունինք, ով կը հասկընայ մեզ ու մեր կարիքները՝ Յիսուսը, Աստուծոյ Որդին: Երբայեցիներին ուղղուած նամակի հեղինակը Յիսուսին նման տիտղոսով ներկայացնելը մեր ուշադրութիւնը Քահանայապետի բնութեան վրայ հրաիրելն է, քանի որ Յիսուս անունը այն անունն էր որ Իրեն տրուեցաւ, երբ մարդ դարձաւ. Աստուծոյ Որդի տիտղոսը ի յախտենից Իրեն տըրուած տիտղոսն է: Տեր Յիսուսը մարդ դարձաւ եւ փորձառեց բոլոր այն բաները, որոնք յատուկ են մարդկանց: Ան փորձուեցաւ ամէն կերպ, բայց մեղք չգրծեց: Այս ամէնը կը նշանակէ, թէ Ան զիտէ այն ամէնը ինչ կը զգանք, բայց քանի որ Ան Աստուած է, Ան ունի մեծ զօրութիւն օգնելու մեզ, երբ փորձութիւններ կը դիմագրաւենք: Ուստի ա՛լ համարձակութիւնով մօտենանք շնորհաց արողին, որպէս զի ողորմութիւն ընդունինք ու շնորհք գտնենք պէտք եղած ատեն մեզի օգնելու:

Սելջիսեղեկը հանդիպեց Աքրահամին, երբ Աքրահամը գաղափար անգամ չուներ թէ ինչի պիտի հանդիպէր: Աստուծոյ քահանայապետը այնտեղ էր, նախքան փորձութիւնը դիմագրաւելը: Սենք երախտապարտ կարող ենք ըլլալ, որ մեր Քահանայապետը զիտէ մեր դժուարութիւններու արդինքը, նոյնիսկ նախքան ատոնց հանդիպիլը: Ան միշտ պատրաստ է օգնելու: Բայց երկու հարցեր կան, որոնք պէտք է ինքներս մեզ հարցնենք: Արդեօք երբ դժուարութիւններու կը հանդիպինք կը դիմե՞նք Իրեն, թէ՝ կը փորձենք ինքներս կարգաւորել՝ առանց մեր Քահանայապետի օգնութեան:

Սենք մեծ Քահանայապետ մը ունինք, ով մեր փոխարէն կը ներկայանայ Աստուծոյ առջեւ: Եկէ՛ք մօտենանք Իրեն եւ խոնարհաբար փնտոնենք Իր պաշտպանութիւնն ու առաջնորդութիւնը:

## ԱՃՈՒԽԻ ԿՈՂՈՎԸ

**Կ**ը պատմուի թէ ծերունի մարդ մը, իր բոռան հետ Քէնթաքի նա-  
հանգին լեռնակողմը ազարակի մը մէջ կ'ապրէր: Ամէն առոտու,  
մեծ հայրիկը կանուխ կ'արթննար եւ խոհանոցի սեղանին առջեւ նըս-  
տած, իր մաշած Սուրբ Գիրքը կը կարդար: Թոռնիկը կ'ուզէր ճիշտ  
մեծ հօր նմանիլ, ուստի ինք ալ նոյնը կ'ընէր:

Օր մը, պատանին հարցուց. «Մեծ հայրիկ, կը ջանամ Սուրբ Գիրքը  
կարդալ քեզի պէս, բայց չեմ հասկնար եւ կարդացածս կը մոռնամ:  
Ի՞նչ օգուտ է Աստուածաշունչ կարդալս»:

Ծերունին կամաց մը դարձաւ վառարանին առջեւէն ուր ածուխ կը  
դմէր եւ ըսաւ. «Տղա՛ս, առ այս ածուխի կողովը եւ գետափէն կողով մը  
ջուր բեր ինձի»: Թոռնիկը կատարեց մեծ հօր պատուերը, բայց մին-  
չեւ տուն հասնի բոլոր ջուրը անհետացաւ կողովին մէջէն: Մեծ հայրը  
ինդաց եւ ըսաւ. «Յաջորդ անգամ աւելի արագ շարժելու ես» ու ես  
դրկեց զինք որ դարձեալ փորձէ:

Այս անգամ տղան աւելի արագ վազեց, բայց ապարդիւն: Ծունչը  
կտրած ըսաւ մեծ հօրը. «Անկարելի է կողովով ջուր բերել» եւ գնաց  
սափոր մը առաւ: «Սափոր մը ջուր չէ ուզածս, այլ կողով մը» կրկնեց  
իմաստուն ծերունին: «Կրնաս ընել: Չեմ կարծեր որ պէտք եղածին  
չափ ջանք կը բափես»: Եւ դրան առջեւ կեցաւ մինչ բոռնիկը դարձեալ  
դրկեց գետափ: Թէեւ տղան զիտէր որ անկարելի է կողովով ջուր փո-  
խադրել, բայց մեծ հօր սիրոյն նորէն փորձեց: Սակայն մինչեւ տուն  
հասնի, բոլոր ջուրը կողովի ծակտիքներէն բափած էր: Հետալով մօտե-  
ցաւ մեծ հօր եւ ըսաւ. «Տեսա՞ր, անօգուտ է»:

«Ուրեմն համոզուա՞ծ ես որ անօգուտ էր լրածդ: Նայէ՛ կողովին»:  
Եթք տղան նայեցաւ, առաջին անգամ ըլլալով նշմարեց տարբերութ-  
ինը: Մրուտած աղտոտ ածուխի կողովը մաքրուած էր:

«Տղա՛ս, նոյնպէս կ'ըլլայ երբ Աստուծոյ Խօսքը կարդաս: Կրնայ ըլ-  
լալ որ չես հասկնար կամ ամէն բան չես յիշէր, բայց Ան քեզ ներսէն  
դուրս կը մաքրէ ու կը փոխէ»:

Այս է Աստուծոյ գործը մեր կեանքերուն մէջ: Ան մեզ ներսէն դէպի դրւու կը փոխէ, եւ կամաց կամաց կը յեղաշրջէ, որ Իր Որդույն՝ Յիսուս Քրիստոսի նմանինք: Ժամանակ յատկացուր ամէն օր Աստուծոյ Խօսքը կարդալու, սերտելու եւ խոկալու Անոր մասին, նաև շուրջիններուդ ալ նոյնը թելադրէ, քանի որ «Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ Իր միածին Որդին տուաւ, որպէսզի Անոր հաւատալով չկորսուինք հապա յափառենական կեանք ունենանք»:

Արդեօր որքա՞ն ժամանակ կը յատկացնես Աստուածաշունչի կարդալու: Խիստ օգտակար է, որ մենք մեզ աստուածապաշտութեան վարժեցնենք: Ամէն:

«Բոլոր գիրքը Աստուծոյ շունչն է եւ օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, շտկելու եւ արդարութեան մէջ խրատելու համար» (Բ Տիմ. 3:16):

Քաղուած՝ «Օրինաբեր նոնենին» գիրքէն



Այն տեղը հովիւներ կային դաշտին մէջ կեցած,  
որոնք իրենց հօտերուն գիշերուան պահպանութիւնը կ'ըսէին:  
Սիա Տէրոջը իրեշտակը անոնց վրայ իջաւ ու Տէրոջը փառքը  
անոնց բոլորտիքը ծագեցաւ ու խիստ շատ վախցան: Բայց  
իրեշտակը ըսաւ անոնց. «Սի՛ վախնաք, վասն զի ահա ես ձեզի մեծ  
ուրախութեան աւետիս մը կու տամ, որ բոլոր ժողովուրդին պիտի  
ըլլայ: Վասն զի այսօր Փրկիչ մը ծնաւ Դաւիթին քաղաքին մէջ, որ  
Օծեալ Տէր է: Եւ այս ձեզի նշան մը ըլլայ՝ մանուկ մը պիտի գտնելք  
խանձարուրով փաքքուած ու մսուրի մէջ պառկած»: Խսկոյն  
այն իրեշտակին հետ երկնային զօրքերու բազմութիւն  
մը եղաւ, որոնք Աստուած կ'օրինէին ու կ'ըսէին. «Երկնքի  
բարձրութեան մէջ Աստուծոյ փառք, երկրի վրայ  
խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն»:

Դուկաս 2:8-14

## Հրաւիրուած եք խրախճանքի

**Ի**նչպէ՞ս կ'արձագանքիք, եթէ Աստուած ձեզի խրախճանքի հրաւիրէր: Եթէ կը մտածէք, թէ խորք է այն միտքը, որ Աստուած կը սիրէ խրախճանքը, որեմն եկէք այն տօնախմբութիւն անուանենք: Եթէ Աստուած ձեզի տօնախմբութեան հրաւիրէր, արդեօք կ'ընդունէի՞ք հրաւիրը: Խրախճանքները, տօնակատարութիւնները եւ խնջոյքները կարծես հեռու չեն Աստուծոյ սրտէն: Ակնյայտ է, որ Ան կը սիրէ տօնակատարութիւնները: Քրիստոսը պատմեց տօներու մասին, եւ Անձամք մասնակցեցաւ եւ ուրախութիւն բերաւ երիտասարդ զոյզի մը՝ անոնց երեկոյքը դարձնելով անմոռանալի իրադարձութեան մը: «Սեղանապետը երբ զինի դարձած զուրին համը առաւ....» (Յովի. 2:9): Անառակ որդիի պատմութեան մէջ կը տեսնենք Հայր Աստուծոյ խորիքրդապատկերը, ով աւագ որդուն կը հրաւիրէ տուն՝ խրախճանքին մասնակցելու համար: «Ուրախ ըլլանք...» (Ղուկ. 15:23): Նաեւ շմոռնանք Գառնուկի հարսանիքի ընթրիքի մասին. կը խորիհմ թէ, այն այնպիսի իրադարձութիւն մըն է, որուն Աստուած անհամբերութեամբ կը սպասէ: «Երանելի են անոնք, որ Գառնուկին հարսանիքին ընթրիքին կանչուած են» (Յայտ. 19:9):

Կը զարմանամ, թէ ինչու համար մարդիկ կը մերժեն Աստուծոյ տօնակատարութիւններու հրաւիրը, յատկապէս երբ անոնք յատուկ կերպվ հրաւիրուած են: Դուք կրնաք տեսնել այս միտքը արտացղուած Քրիստոսի առակներուն մէջ, եւ նոյնիսկ այսօր, Գառնուկի հարսանիքի ընթրիքի տօնակատարութեանը մասնակցիլը կարծես թէ փափաքելի եռանդ չի առաջացնեք շատերու մէջ: Կը խորիհմ թէ, եթէ Աստուած է տօնակատարութիւնը կազմակերպողը, որեմն հաստատ այն շատ յիշարժան պիտի ըլլայ: Կարծես թէ իրորինակութիւն մը կայ. Աստուած կ'ուզէ տօնախմբութիւն ընել, բայց մենք չենք ուզեր մասնակցիլ: Ինչո՞ւ է այդպէս:

Այս խնդիրը ցայտուն կերպով նկարագրուած է անառակ որդիի հօր կերպարին մէջ: Տեսէք, թէ ինչպէս ան կրտսեր որդիի տուն դարձի տօնակատարութեան ուրախութիւնը թողելով դուրս կուգայ, դառնացած աւագ որդիին աղաչելու ներս մտնել եւ միասին խրախճանքը վայելել:

Հայրը մտահոգուած էր աւագ որդիի համար, քանի որ ան ուրախութիւն չուներ իր սրտին մէջ: Երբեմն կը խորիիմ, թէ մեզմէ ոմանք աւագ եւրօք պէս կը տառապին անհանդուրժող ու տրտնացող կեցուածքէ մը: Երբ երկրպագութեան համար միասին կը հաւաքուինք, Աստուած կը հրահիրէ մեզ տօնելու մեր տուն վերադարձը, եւ նաեւ Իր առատաձեւնութիւնը: Բայց կան ժամանակներ, երբ կարծես թէ չենք ուզէր միանալ տօնակատարութեանը, երկրպագութեանը: Ի՞նչն է նման վերաբերմունքի պատճառը: Ի՞նչն է սխալը: Ինչո՞ւ համար աւագ որդին չուզեց միանալ տօնակատարութեանը: Լսէք հօրն ուղղուած կրակոտ խօսքերը, որոնք կ'արտացոլեն իր սրտի մէջ տարիներով դիզուած խոյրը վլորվմունքը. «Ահա այսչափ տարի է, որ քեզի կը ծառայեմ ու բնաւ քու խօսքէդ դուրս չելայ ու ինձի երբեք ուզ մը չտուիր, որ իմ բարեկամներուս հետ ուրախութիւն ընէի» (Ղուկ. 15:29): Այլ խօսքով՝ «Ես այնքան շատ բան ըրած եմ քեզի համար, դուն ինձի պարտական ես»:

Աստուծոյ երկար տարիներով ծառայած քրիստոնեաներ իրենց սրբտի մութ անկիւններուն մէջ հնարաւոր է, որ նոյն մտքերը ունենան, նոյնիսկ զգիտակցելով այն: Ուստի, սրտանց եւ ուրախութեամբ տօնակատարութիւն եւ երկրպագութիւն ընելու փափաքը կը մարի իրենց մէջ: Հայրն ու աւագ որդին շատ տարբեր լեզուներով կը խօսէին: Աւագ որդին զայրոյթով կը խօսի իր ըրածներու մասին, եւ թէ հայրը ինչեր է իրեն պարտք: Ասիկա իրաւական պայմանագիր կազմողի լեզուն է, որու մէջ ան կը զգայ թէ իր իրաւունքը կերած են: Ան կը կարծէր, թէ իր կատարածները իրեն որոշակի իրաւունքներ արտօնած են: Այսպիսի մտածելակերպով ան երբեք պիտի չկրնայ վայելել տօնակատարութիւնը: Այս վերաբերմունքը կը սպաննէ տօնակատարութեան եւ երկրպագութեան հոգին: Հայրը կը խօսի շնորհիք լեզուով: Ան կը խուսափի պայմանագրերու, իրաւունքներու եւ պարտականութիւններու լեզուով խօսիլը, փոխարէնը շնորհիք ու սիրոյ լեզուով կ'ըսէ. «Դուն միշտ ինձի հետ ես ու իմ բոլոր ունեցած քուկդ է» (Ղուկ. 15:31): Այս տխուր որդին ինչ շահեցաւ կամ ինչ կորսնցուց այլքան ալ կարեւոր չէ. կարեւոր է տեսնել հօր բարութիւնն ու առատաձեւնութիւնը:

Երբ կը հասկնանք, որ այդ ամենը կարեւոր է, ուրախութեամբ կը միանանք Աստուծոյ «տօնակատարութիւններուն» եւ ուրախութեամբ կ'երկրպագենք զինք:

Ուես Տիրլաւ

## Հայ քրիստոնէական միսիոներութիւն

«Եթէ Տէրը չիմէ տունը, զուր տեղ կ'աշխատին անոր շինողները: Եթէ Տէրը չպահպանէ քաղաքը, զուր տեղ կը հսկեն պահապանները» (Սաղ. 127:1):

Դափիքը թագաւոր էր, ով զիտեր, որ իր ուժերէն առաւել Աստուծոյ օգնութեան կարիքն ունի: Իր բոլոր բանակի եւ պահակազօրքի հետ մէկտեղ ան զիտեր, որ եթէ Տէրը չպահպանէ քաղաքը, զուր տեղ կը հսկեն պահապանները:

Մենք արդեն քան տարի է կը ծառայենք Հայաստանի մէջ, որպէս միսիոներական ծառայութիւն: Երբ ծառայութիւնը սկսանք մենք զանձանակ չունեինք, ֆինանսական միջոցներ չունեինք, փորձառութիւն չունեինք, եւ չէնք զիտեր մեզ ինչ կը սպասէ: Հայաստանի բնակչութեան 30%-ը աղքատութեան մէջ կ'ապրի: Նոյնիսկ հիմա, շատ մարդիկ կ'ապրին մետաղական տնակներու մէջ -35°C աստիճանի պայմաններուն մէջ, առանց ջեռուցման:

Եթէ Տէրը չ'ապահովէր, մենք ոչ մէկ միջոց ունեինք հիւանդ ու քաղցած երեխաներուն օգնելու: Մենք հաւատարմաքար աղօքեցինք եւ մեր աղօքքները պատասխանուեցան: Տէրը հաւատարիմ է Իր բոլոր զաւակներուն: Այսօր զարմացած կը մնանք Հայաստանի մէջ Տէրոջ կատարած գործերուն, որու մէջ ընդգրկուած են ԱՍՍ-ի եօթ աշխատակիցներ եւ շատ կամաւորներ:

Սեր խնամքի տակ ունենալով 90 ընտանիքներ, Աստուծոյ Խօսքը կը հասցնենք շուրջ 300 անձի: Բայց այդ մենք չենք, այլ Անոր հաւատարմութիւնն է ու շատերու աղօքքներու պատասխանը, որ այսքանի կը հասնինք:

Մենք կը գոհանանք Տէրոջմէ տարուայ ընթացքին կատարուած բժշկական յաջող գործողութիւններուն համար: Մենք Անոր փառք կուտանք, որ մեր աշխատակիցներուն ապահով պահեց, մինչ անոնք հազարաւոր մղոններ մեքենայ կը վառեն ամռանն ու ձնուանն: Մենք շնորհակալ ենք Անոր, որ շատեր դարձի եկան ու ջրային մկրտութեամբ Տէրոջը հետ ուխտի մէջ մտան: Մենք փառք կուտանք Անոր երեխա-



ԱՍՄ-ի 20 ամեակի տօնակատարութիւնը Երևանի մէջ

ներու եւ պատանիներու ծառայութեան համար, Աստուածաշունչի սերտողութեան խումբներու եւ ուղղերենի ծառայութեան համար:

Առիրէն օգտուելով կ'ուզենք մեր շնորհակալութիւնը յայտնել մեր աջակիցներուն, հովանաւորներուն, բազմաթիւ եկեղեցիներուն, ովքեր կանգնեցին մեր կողքին, Սիտնէյի եւ ԱՄՆ-ի շատ կամաւորներուն, եւ անոնց, որոնք միացան մեզ 2018 թ-ի միսիոներական առաքելութեան ժամանակ: Մենք շնորհակալութիւն կը յայտնենք անոնց, որոնք աղօթեցին եւ նուիրաբերեցին ծառայութեանը, մեզ հետ լացին եւ Քրիստոսի սէրը ցուցաբերեցին Հայաստանի ամենաաղքատ ժողովուրդին:

Կը խնդրենք ձեր աղօքքներուն մէջ յիշեք անոնց, քանի որ ջերմաստիճանը կ'իջնէ մինչեւ  $-30^{\circ}\text{C}$ :

Թող Հայր Աստուծոյ խաղաղութիւնն ու սէրը ձեզ հետ ըլլայ:

ԱՍՄ-ի վարչութիւնը կը մաղթէ ձեզ օրինեալ Սուրբ Ծնունդ եւ ուրախ Նոր տարի: